ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի մարտի 12-ին հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի երկու շրջանավարտների դիպլոմային աշխատանքների բանավոր պաշտպանություն:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը (ատենավար), Մայր տաճարի լուսարարապետ գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, Մայրավանքիս միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և հյուրեր:

Շրջանավարտների ավարտաճառերի պաշտպանության քննիչ հանձնաժողովի կազմում էին Տ. Աբրահամ վրդ. Մկրտչյանը (հանձնաժողովի նախագահ), հոգևոր ճեմարանի դասախոսներ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սիմոն Կրկյաշարյանը և բանասիրության դոկտոր Խաչիկ Բադիկյանը:

Նախ ընթերցվեց յուրաքանչյուր աշխատանքի վերաբերյալ հանձնաժողովի կողմից կազմված եզրակացությունը, որից հետո շրջանավարտները հանդես եկան իրենց ավարտաճառերի բանավոր պաշտպանությամբ և պատասխանեցին տրված հարցերին:

Իրենց ավարտաճառերի պաշտպանությամբ հանդես եկան.

1. Օնիկ սրկ. Քիրեմիճյան.

Ավարտաճառի թեման էր «Զաքարիա Պատրիարք Կաղզվանցի»:

Աշխատանքը բաղկացած է 58 մեքենագիր էջերից և ներկայացնում է ԺԸ դարի նշանավոր եկեղեցական-հասարակական գործիչ Կ. Պոլսի հայոց Պատրիարք Զաքարիա Կաղզվանցու կյանքն ու գործունեությունը:

Ներկայացված աշխատանքն արժանացավ «բավարար» գնահատականի:

2. Տիրան սրկ. Գըլըճյան.

Ավարտաճառի թեման էր «Տերտուղիանոսը և նրա աստվածաբանական ժառանգությունը»:

Ուսումնասիրությունը բաղկացած է 53 մեքենագիր էջերից և իր մեջ բովանդակում է քրիստոնեական Եկեղեցու այդ մեծ երախտավորի աստվածաբանության ընդհանուր դրույթները: Աշխատությունն ավելի է արժևոր-

վում, մանավանդ, Տերտուղիանոսի «Զղջման մասին» գործի ժամանակակից հայերեն (առաջին անգամ) թարգմանությամբ:

Ներկայացված ուսումնասիրությունը գնահատվեց «բավարար»:

Ավարտաճառերի պաշտպանությունից և հոգևոր ճեմարանի դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունից հետո, շրջանավարտներին ուղղված շնորհավորանքի և բարեմաղթության խոսք ասաց գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Իր խոսքում սրբազան հայրը անդրադարձավ ավարտաճառերի թեմաների ճիշտ ընտրության խնդրին և կոչ արեց, որ այսուհետև ավելի գործնական մոտեցում ցուցաբերվի այս հարցում:

Հաջորդ օրը շրջանավարտներին ընդունեց Վեհափառ Հայրապետը և իր օրհնությունը բաշխեց նրանց:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է շրջանավարտներին՝ մաղթելով, որ ապագայում նրանք դառնան անխոնջ մշակները Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու: